

Առարկություն

Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամում պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ կազմված ընթացիկ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվության) վերաբերյալ

Հաշվետվությունում նշված փաստերի, դատողությունների և եզրահանգումների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը. *(Հաշվետվության պարբերությունները հաջորդաբար համարակալվել են փաստաթղթի հետ աշխատանքը դյուրացնելու նպատակով)*

(2 էջ 1-2-րդ պարբ.) Հաշվետվության տվյալ պարբերություններում նշված վարկային ծրագիրը ներառված չի եղել ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամում վերահսկողություն իրականացնելու մասին» 2016թ-ի փետրվարի 15-ի թիվ 5/3 որոշման, ինչպես նաև «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամում ստուգում իրականացնելու մասին» 2016թ-ի հունիսի 20-ի թիվ 20/2 որոշման (այսուհետ՝ Հիմնադրամի ստուգման որոշումներ) մեջ հետևաբար Հաշվետվության նույն պարբերությունում նշված ծրագրի վերաբերյալ վերահսկիչ պալատի համապատասխան աշխատակիցների (այսուհետ՝ Պալատ) կողմից իրականացված **ծրագրի որոշ հաստատվածների** ուսումնասիրության հիման վրա կատարված վերլուծություններն ու դատողություններն **ամբողջական բնույթ չեն կրում** և կարող են երրորդ անձանց մոտ **հանգեցնել թյուրբմբնման**:

(2 էջ 3-րդ պարբ.) Հաշվետվության մեջ նշվում է, որ ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Էմին 123 հասցեում գտնվող Հիմնադրամի գործունեության տարածքը տրամադրվել է Հիմնադրամին ՀՀ կառավարության «անմիջական միջամտության» արդյունքում: Նշենք, որ Ձեռնարկությունների ինկուբատոր վարկային ծրագրով նախատեսված առնվազն **5000 քմ անհատույց** տարածքը **Հիմնադրամին չի տրամադրվել**: Ինչ վերաբերվում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի և Հիմնադրամի միջև 25.03.2003թ-ի Վարձակալության պայմանագրին, ապա նկատենք, որ այն կնքվել է **Հիմնադրամի և համալսարանի միջև** պայմանագրի պայմանների վերաբերյալ վարված **բանակցությունների** և ձեռքբերված վերջնական **համաձայնության արդյունքում**, այլ խոսքերով **իրականությանը չի համապատասխանում** Հաշվետվության մեջ տեղ գտած ՀՀ կառավարության «անմիջական միջամտության» ձևակերպումը:

Բացի այդ Հաշվետվության մեջ առկա է նշում միայն տարածքի վարձակալության **նախկինում գործող** գինի այն է՝ տարեկան 7700 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի վերաբերյալ: Նույն Հաշվետվության մեջ բացակայում է որևէ հիշատակում 25.01.2010 թվականին կնքած համաձայնագրի վերաբերյալ, որում մասնավորապես տեղի է ունեցել վարձակալված տարածքի մակերեսի ճշգրտում (1900 քմ-ը ճշգրտվել է և դարձել է 1771,9 քմ) իսկ **վարձակալության արժեք սահմանվել** է ամսական 561533,30 դրամ առանց ԱԱՀ-ի (այսինքն մոտավորապես **14246 ԱՄՆ դոլարին** համարժեք դրամ **նախկին տարեկան 7700 ԱՄՆ դոլարին** համարժեք ՀՀ դրամի փոխարեն):

(2-3 էջեր 4 և 5-րդ պարբ.) Հաշվետվության այս հատվածը հանդիսանում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի և Հիմնադրամի կանոնադրության դրույթների մեջբերում (դրանց հիման վրա հետագա վերլուծության նպատակով):

(3 էջ 6-րդ պարբ.) Հաշվետվության նշված պարբերությունում արձանագրված փաստերը հանդիսանում են Պալատի ենթադրությունները, քանի որ նրանց կողմից նշված վարկային ծրագրի մասով առանձին և ամբողջական ուսումնասիրություն չի իրականացվել:

Կարևոր ենք համարում նաև ընդգծել, որ Համաշխարհային բանկի «Ձեռնարկությունների ինկուբատոր» վարկային ծրագրի շրջանակում (վավերացված ՀՀ ԱԺ կողմից) նախատեսված է եղել դրամաշնորհների (առանց վերադարձման և/կամ շահույթի ստացման պայմանի) տրամադրում մասնավոր կազմակերպություններին: Հիմնադրամի առաջարկությամբ դրամաշնորհների տրամադրումը փոխարինվել է բաժնեմասային ներդրումների փորձնական ծրագրի իրականացմամբ, որի 100% ռիսկը Հիմնադրամը վերցրել է, իր վրա (անհաջողության դեպքում պետության կողմից վնասը չէր հատուցվելու): Այս նախաձեռնությամբ Հիմնադրամը նպատակ էր հետապնդում փորձարկելու բաժնեմասային ներդրումների մեխանիզմ հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, որն էլ հետագայում խթան հանդիսացավ Հայաստանում վենչուրային ֆոնդի ձևավորման համար: Նշենք նաև, որ քննարկվող նախաձեռնության արդյունքում ստեղծված «Սոքսիո» ՓԲԸ-ն և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ն առ այսօր համարվում են հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առավել հաջողված ընկերություններից, որոնք ունեն նաև միջազգային ճանաչում:

1. Հիմնադրամի կողմից ստեղծված ընկերություններում բաժնեմասի օտարման վերաբերյալ

(3 էջ, 7-րդ պարբ.) Հիմնադրամին պատկանող բաժնետոմսի վաճառքի գործարքը մի իրավաբանական անձի հետ, որի բոժնետոմսերը պատկանում են Հիմնադրամի խորհրդի անդամի չի կարող հանդիսանալ Հիմնադրամի գույքի օգտագործում «ի շահ» խորհրդի անդամի, քանի, որ նախ նման գործարքի կատարումը ինքնին «ի շահ» չէ՝ այն կարող է նաև վնասաբեր լինել, բացի այդ գործարքի մյուս կողմում ոչ թե անմիջականորեն խորհրդի անդամ հանդիսացող անձն է այլ միանգամայն այլ իրավաբանական անձ, որի բաժնետոմսերի մի մասը պատկանում է խորհրդի անդամին: Բացի այդ պետք է ընդգծենք, որ նշված գործարքով Հ.Ավոյանը որպես խորհրդի անդամ չի քվեարկել խորհրդի որոշման կայացման գործընթացում՝ բացառելով շահերի հնարավոր բխումը:

(3-4 էջ, 8-9-րդ պարբ.) «Էյ Այ Թի» ՓԲԸ և «Սոքսիո» ՓԲԸ-ի բաժնետոմսերի օտարման վերաբերյալ խորհրդի որոշումներում տեղ գտած փաստական հանգամանքների շարադրանք:

(4 էջ 10-րդ պարբ.) /«Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշման պահանջները չպահպանելու մասով. /

Որպես որոշակի փաստաթղթեր պահպանելու Հիմնադրամի պարտականության իրավական հիմքն Հաշվետվության մեջ վկայակոչվում է ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի

ցանկը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշումը, նշենք որ տվյալ իրավական ակտը **չի կարող** Հիմնադրամի համար հանդիսանալ որոշակի փաստաթղթերի պահպանման պարտավորություն առաջացնող իրավական հիմք, քանի որ ՀՀ կառավարության վերը նշված որոշման 1-ին կետի բ) մասի համաձայն՝ տվյալ որոշման **գործողությունը չի տարածվում այլ իրավաբանական անձանց** և անհատ ձեռնարկատերերի գործունեության արդյունքում առաջացած փաստաթղթերի վրա, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Իր հերթին «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի (ինչպես նաև մեզ հայտնի որևէ այլ օրենքի) շրջանակում նման կարգավարում առկա չէ:

Ինչ վերաբերվում է Հիմնադրամի ներքին իրավական ակտում (արխիվացման վերաբերյալ հրամանում) համապատասխան կառավարության որոշումը (351-Ն) հիշատակելու հանգամանքին, ապա նշենք, որ դրանով Հիմնադրամը հղում է տվել նշված իրավական ակտին նպատակ հետապնդելով **սեփական հայեցողությամբ** օգտվել համապատասխան գործողությունների կատարման ձևաչափից, ինչը սահմանվել է նշված որոշմամբ: Նման հիշատակման առկայության փաստը **չի կարող դիտարկվել**, որպես Հիմնադրամի համար **օրենսդրական պարտականության** առկայության փաստ, քանի որ, իրավական առումով, նախորդ պարբերությունում հիշատակված նորմը (որոշման 1-ին կետի բ) մասը) չի պարունակում «եթե իրավաբանական անձի ներքին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ» ձևակերպումը:

Բացի այդ կարևոր ենք համարում նշել, որ Հաշվետվությունում հիշատակված 351-Ն որոշման 5-րդ կետը որևէ **հիշատակում չի պարունակում** «որպես մշտական պահպանության ենթակա որոշումների և արձանագրություններին կից փաստաթղթերի, մասնավորապես՝ բաժնեմասերի ձեռքբերման վերաբերյալ կազմակերպությունների առաջարկների» վերաբերյալ:

Ուշագրավ է, որ Պալատի կողմից հիշատակված կետը որպես պահպանման ենթակա փաստաթղթերը հիշատակում է՝ «5.1. Բանկային համակարգի և վարկավորման վերաբերյալ փաստաթղթերը; 5.2. Արժեթղթերի շուկայի կարգավորման վերաբերյալ փաստաթղթերը; 5.3. Ֆինանսավորման վերաբերյալ փաստաթղթեր; 5.4. Ապահովագրման վերաբերյալ փաստաթղթերը», անհասկանալի թե նշված ցանկն ինչ առնչություն ունի Հաշվետվությունում հիշատակված «որոշումների և արձանագրություններին կից փաստաթղթերի, մասնավորապես՝ բաժնեմասերի ձեռքբերման վերաբերյալ կազմակերպությունների առաջարկների» հետ:

Ընդգծենք միայն, որ ամեն դեպքում նշված իրավական ակտով հիշատակված (անգամ եթե պայմանականորեն ընդունենք, որ այն կիրառելի է քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ) պահպանման ենթակա փաստաթղթերի այն տեսակները (4-րդ կետով նախատեսված հաշվապահական հաշվառման վերաբերյալ փաստաթղթեր), որոնք առաջացել են Հիմնադրամի գործունեության ընթացքում, համաձայն նույն իրավական ակտի ենթակա են պահպանության, աշխատակիցների անձնական հաշիվներ և աշխատավարձի հաշվառման մատյաններ 50 տարի պահպանության, Հաշվապահական հաշվետվություններ և հաշվեկշիռներ՝ կից բացատրագրերով ամփոփ տարեկան, տարեկան մշտական պահպանության, հիմնական միջոցների վերագնահատման

և մաշվածության որոշման մասին արձանագրություններ, ակտեր, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր 10 տարի պահպանության, նշված կետում հիշատակված այլ ենթակետեր՝ 3-5 տարի ինչը և կատարվել է Հիմնադրամի կողմից:

Հավելենք նաև, որ Պալատի կողմից հիշատակվող փաստաթղթերն ամեն դեպքում պահպանվել են այլ պետական մարմիններում, Հիմնադրամն այս առումով չի հանդիսանում պահպանության պարտականություն կրող միակ և առաջնային մարմինը:

(4 էջ 11-րդ պարբ.) /Առանց խորհրդի կողմից ընդունված համապատասխան որոշման բաժնետոմսերի օտարման մասով./

Քննարկվող դեպքերում Հիմնադրամի հոգաբարձուների **խորհուրդը** ոչ միայն **կայացրել է համապատասխան որոշումներ**, այլև իր կողմից կայացրած որոշումներով հստակ կարգավորել է «Սոքսիո» ՓԲԸ-ի և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերման («Սոքսիո» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N10, առ 08.12.2005թ. և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N12, առ 01.06.2006թ.) և օտարման («Սոքսիո» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N12, առ 01.07.2006թ. և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N15, առ 16.04.2007թ.) ընթացքը:

Նշենք, որ **«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի** 25-րդ հոդվածի 1-ին մասը հիմնադրամի **գույքի օտարումը չի սահմանում որպես հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասության մեջ ներառված հարց**: Գույքի օտարման իրավասությունը բացակայում է նաև «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» կանոնադրության 67-րդ հոդվածով նախատեսված հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բացառիկ իրավասությունների ցանկում:

Ավելին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1) կետի համաձայն կառավարիչը **(տնօրենը) տնօրինում է հիմնադրամի գույքը**, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերության համաձայն տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Այլ խոսքերով, Հիմնադրամի գույքի՝ այդ թվում և բաժնետոմսերի օտարման իրավունքը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1) կետի ուժով հանդիսանում է տնօրենի իրավասությունը, հոգաբարձուների **խորհուրդը գուտ սահմանում է գույքի տնօրինման կարգը**:

Ավելին, այդ ընկերությունների մասով կնքված գործարքները պատշաճ կերպով արտացոլվել են Հիմնադրամի կողմից հրապարակվող և ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացվող՝ 2007 թվականի տարեկան հաշվետվությունների մեջ, որոնք նաև հաստատվել են Հիմնադրամի խորհրդի կողմից: Հավելենք նաև, որ քննարկվող հարցով որևէ դիտարկում չի ներկայացվել նաև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ **ամենամյա աուդիտորական եզրակացությամբ**: Ավելին, աուդիտորական հաշվետվության մեջ, որը նույնպես հաստատվել է Հիմնադրամի խորհրդի կողմից քննարկվող գործարքները ներկայացված են մանրամասնորեն:

Ընդգծենք, որ Հաշվետվության այս հատվածում բացակայում է որևէ հիշատակում այն մասին, որ «Սորսիո» ՓԲԸ-ի բաժնետոմսերը օտարվել են 20% հավելաճով:

(4 էջ 12-րդ պարբ.) /Որոշակի արժեքով բաժնետոմսերի օտարելու նպատակահարմարությունը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր խորհրդին չներկայացնելու մասով./ Քննարկվող իրավահարաբերության նկատմամբ կիրառելի օրենսդրությամբ **նախատեսված չէ** հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին բաժնեմասի օտարման նպատակահարմարությունը հիմնավորող **փաստաթղթերի ներկայացման որևէ պարտականություն**:

Ինչ վերաբերվում է Հաշվետվության մեջ առկա «**Բաժնետիրական ընկերությունների մասին**» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության վրա կատարված հղմանը, ապա նշենք որ տվյալ կետով սահմանված կարգավորումներ **ընդհանրապես կիրառելի չեն** քննարկման առարկա հանդիսացող իրավահարաբերությունների նկատմամբ, քանի որ տվյալ դեպքում խոսք չի գնում «Սորսիո» ՓԲԸ-ին և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ին պատկանող գույքի օտարման մասին (59-րդ հոդվածը առհասարակ վերաբերվում է **բաժնետիրական ընկերությունների կողմից իրենց պատկանող գույքի օտարմանը**) մինչդեռ քննարկվող իրավիճակում օտարվել են նշված կազմակերպությունների բաժնետեր հանդիսացող Հիմնադրամի սեփականությունը հանդիսացող գույքը՝ բաժնետոմսերը:

(5 էջ 13-րդ պարբ.) Անդրադառնալով Հաշվետվության մեջ նշված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ (7-րդ, 8-րդ, 9-րդ մասեր) և 1027-րդ հոդվածների հղումներին նշենք, որ **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ, 9-րդ մասերը** համադրված սահմանում են տնտեսական ընկերակցություններում և ընկերություններում որպես ավանդ ներդրված **դրամական գնահատում ունեցող այլ իրավունքների գնահատման կանոն**, այլ ոչ թե մասնակցի պարտականություն բաժնետոմսերի պարտադիր գնահատում իրականացնելու վերաբերյալ: Ինչ վերաբերվում է **1027-րդ հոդվածին** ապա այն, առհասարակ, սահմանում է **առանց իրավաբանական անձ կազմավորելու** համատեղ գործունեության պայմանագրի մասնակիցների **ավանդների դրամական գնահատման կանոն** և, առնվազն, անհասկանալի է թե ինչ նպատակով է վկայակոչվել բաժնետիրական ընկերությունում Հիմնադրամին պատկանող բաժնետոմսերի օտարման իրավահարաբերությունները քննարկելիս:

Այսպիսով, Հիմնադրամի կողմից օտարվող գույքի՝ բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման և դրա համար անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու, նման մասնագետի ներգրավման ոչ անհրաժեշտություն, ոչ պարտավորություն և/կամ օրենսդրական պահանջ Հիմնադրամը չուներ և չէր կրում:

(5 էջ 14-րդ պարբ.)

• **Խորհրդի որոշումները պահպանվել են** («Սորսիո» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N10, առ 08.12.2005թ. և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N12, առ 01.06.2006թ.) և օտարման («Սորսիո» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N12, առ 01.07.2006թ. և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N15, առ 16.04.2007թ.), բացի այդ նշենք, որ ամեն դեպքում քննարկվող փաստաթղթերից որևէ մեկը չի հանդիսանում մշտական պահպանության ենթակա: Նույն՝ 351-Ն որոշման (անգամ եթե,

պայմանականորեն ընդունենք, որ տվյալ որոշումը և դրա հավելվածի 5-րդ կետը կիրառելի է քննարկվող իրավիճակում) հավելվածի 5-րդ կետում Պալատի կողմից մատնանշած փաստաթղթերի (այստեղ խոսքը գնում է մոտավորապես համընկնող անվանումներով փաստաթղթերի մասին) **պահպանման ժամկետն առավելագույնը 3-5 տարի է, այլ ոչ թե մշտական:**

Ընդգծենք նաև, որ ամեն դեպքում նշված իրավական ակտով հիշատակված (անգամ եթե պայմանականորեն ընդունենք, որ այն կիրառելի է քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ) պահպանման ենթակա փաստաթղթերի այն տեսակները (4-րդ կետով նախատեսված հաշվապահական հաշվառման վերաբերյալ փաստաթղթեր), որոնք առաջացել են Հիմնադրամի գործունեության ընթացքում, համաձայն նույն իրավական ակտի **ենթակա են պահպանության՝ աշխատակիցների անձնական հաշիվներ և աշխատավարձի հաշվառման մատյաններ 50 տարի, Հաշվապահական հաշվետվություններ և հաշվեկշիռներ՝ կից բացատրագրերով ամփոփ տարեկան, տարեկան մշտական պահպանության, հիմնական միջոցների վերագնահատման և մաշվածության որոշման մասին արձանագրություններ, ակտեր, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր 10 տարի, նշված կետում հիշատակված այլ ենթակետեր՝ 3-5 տարի, ինչը և կատարվել է Հիմնադրամի կողմից:**

- Հիմնադրամի գույքի տնօրինման կարգ հաստատվել է **կոնկրետ գործարքների մասով.** - Նշենք, որ կոնկրետ քննարկվող գործարքների վերաբերյալ խորհրդի կողմից ընդունված համապատասխան որոշումներով իրականացվել է **օտարումը կարգավորող գործընթաց** (ինչպես օրինակ բանակցելու լիազորության սահմանում, հավանական գնորդներին ուղղված առաջարկի, վաճառքի այլ պայմանների հաստատում և այլն): Հավելենք, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը (ինչպես նաև մեզ հայտնի որևէ այլ իրավական ակտ) չի սահմանում Հիմնադրամի գույքի օտարման կարգի պարտադիր (անգամ օրինակելի) ձևաչափ և/կամ բնութագիր: Գտնում ենք, որ նման պայմաններում նշված երկու խորհրդի որոշումները (բաժնետոմսերի օտարման վերաբերյալ) ոչ այլ ինչ են քան կոնկրետ գույքի (բաժնետոմսերի) օտարման կարգեր, հետևաբար այս մասով Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը իրականացրել է իր բացառիկ իրավասությունը:

Բացի այդ նշենք, որ Հիմնադրամը պարբերաբար իրականացնում է իր ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն 2 հունիսի 2000 թվականի N102 հրամանով սահմանված կարգով, ինչպես նաև հիմնական միջոցների սկզբնական հաշվառում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն 12 հունիսի 2000 թվականի N104ա հրամանի կարգավորումներին համաձայն:

- Հիմնադրամի բաժնեմասերի իրական (շուկայական) արեքի գնահատման օրենսդրական անհրաժեշտությունը բացակայում է, բացի այդ օտարումն ամեն դեպքում Հիմնադրամի կողմից իրականացվել է սկզբնական արժեքի նկատմամբ **20% հավելաձով, ինչը հանդիսացել է օտարման իրական արժեք:**

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը երկու ընկերությունների բաժնետոմսերի օտարման գործընթացը կարգավորել է համապատասխան որոշումներով

(«Սորսիո» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N12, առ 01.07.2006թ. և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի մասով՝ արձանագրություն N15, առ 16.04.2007թ.):

2. «Սորսո» ՓԲԸ ստեղծված ոչ նյութական ակտիվների վերաբերյալ

(6 էջ 15-16-րդ պարբ.) «Սորսիո» ՓԲԸ-ում ստեղծված ոչ նյութական ակտիվների վերաբերյալ Պալատի կողմից կատարված ֆինանսական վերլուծությունը չափեր է տեղ գտեր Հաշվետվության մեջ, որը կազմվել է **միանգամայն այլ վերահսկողության օբյեկտի՝** այն է Հիմնադրամի գործունեության վերաբերյալ: Նույն տրամաբանությամբ տեղին չեն Հաշվետվության 6-8 էջ 18-25-րդ պարբ. ձևակերպումները.

(6 էջ 17-րդ պարբ.) /«Սորսիո» ՓԲԸ-ին և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ում սպասվելիք եկամուտները երաշխավորված լինելու մասով./ Նման եզրահանգումը ոչ այլ ինչ է քան որոշակի տվյալների հիման վրա կատարված **սուբյեկտիվ դատողությունների արդյունք:** Քննարկվող ժամանակահատվածում ընկերությունների արժեթղթերի արժեքի աճի նման կանխատեսում կատարելը և համապատասխան քայլեր ձեռնարկելն ունի **ռիսկայնության բարձր մակարդակ:**

(8 էջ 22-25-րդ պարբ.) «Պիկսարտ» ՍՊԸ-ն և «Պիկսարտ» Ինք-ը Հիմնադրամի հետ որևէ առնչություն չունեցող ընկերություններ են:

(9 էջ 26-րդ պարբ.) Բաժնեմասերի «վաղօրոք» և առանց իրական շուկայական գնի որոշման օտարումը «ոչ շահավետ» որակելը սուբյեկտիվ գնահատման արդյունք է:

Առավել ևս եթե օտարումն իրականացրել է սկզբնական արժեքի նկատմամբ 20% հավելածով, ինչն դիտարկվել է, որպես իրական գին:

Բացի այդ կարևոր ենք համարում ընդգծել, որ Հիմնադրամը իրականացնելով նշված բաժնետոմսերի օտարում **կատարել է իր առջև դրված ծրագրային խնդիրը**, այն է՝ փորձարկել բաժնեմասային ներդրումների մեխանիզմը հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում և **ոչ թե եկամուտ ստանալը:**

3. Հիմնադրամի կողմից ստեղծված ընկերությունների բաժնետոմսերի իրական արժեքի գնահատման և դրանց վաճառքի հավանական գնի որոշման վերաբերյալ:

(9 էջ 27-29-րդ պարբ.) «Հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքից, և Հիմնադրամի համախմբված հաշվետվություններից մեջբերումներ հետագա փաստարկների կառուցման նպատակով:

(10 էջ 30-ին պարբ.) Հաշվապահական հաշվառման 39 ստանդարտով համակարգվում են ֆինանսական ակտիվների չորս կատեգորիաներ: Պալատի կողմից մատնանշվել է 39 միջազգային ստանդարտի՝ մինչև մարման ժամկետը մարվող ներդրումները՝ ֆիքսված կամ որոշելի վճարումներով և **ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվները:** Մինչդեռ Հիմնադրամի բաժնետոմսերը դասվում են ֆինանսական ակտիվների այլ կատեգորիայի՝ **վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ** և հիմնադրամն իր բաժնետոմսերը օտարել է հենց վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիային համապատասխանող ընթացակարգով: Միանգամայն պարզ է, որ **ընկերության բաժնետոմսերը «մարման ժամկետ» ունեցող ամեն դեպքում չեն կարող համարվել:**

Ընդգծել, որ Պալատի կողմից այս պարագայում կատարվել է ֆինանսական ակտիվների **կատեգորիայի ոչ ճիշտ ընտրություն**, ինչի հիման վրա իրականացվող վերլուծությունները հանգեցրել են **ոչ ճիշտ եզրահանգման**:

(10 էջ 31-րդ պարբ.) Հաշվետվությունում ներկայացված **մեջբերումն ամբողջական չէ**:

Պարբերությունը պարունակում է հետևյալ ձևակերպումը «Ներդրումները գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին և նրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել...», մինչդեռ իրականում աուդիտորական ընկերության թիվ 16 եզրակացությունում տեղ է գտել հետևյալ ձևակերպումը «Ներդրումները գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին և նրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: **Տվյալ ներդրումները պետք է հետազայում չափվեն սկզբնական արժեքով**»:

Այսինքն Պալատի շարադրանքից **բաց է թողնվել**՝ «պետք է հետազայում չափվեն սկզբնական արժեքով:» հատվածը, ինչը և կատարվել է հիմնադրամի կողմից:

/«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի ինչպես նաև կիրառելի հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն Բաժնետոմսերի վաճառքից առաջ վերագնահատում իրականացնելու անհրաժեշտության մասով./ - Բաժնետոմսերի վաճառքից առաջ վերագնահատում անհրաժեշտ չէ, ըստ ՀՀ հաշվապահական հաշվառման 39-րդ ստանդարտի (գործել է 2007թ.-ին), որի 5.2 «Ֆինանսական ակտիվների հետազայում չափում» հոդվածի, 68-րդ կետի գ) ենթակետի համաձայն «Սորսիո» ՓԲԸ-ի և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի բաժնետոմսերը դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Նույն ստանդարտների, նույն հոդվածի 73-րդ կետի համաձայն՝ այն ֆինանսական ակտիվները, որոնք չունեն ֆիքսված մարման ժամկետ, պետք է հետազայում չափվեն սկզբնական արժեքով: Այս մոտեցման հետ **համաձայնվել է նաև** Հիմնադրամի 2007թ.-ի տարեկան հաշվետվությունները աուդիտ կատարած **«ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ-ն**՝ համապատասխան ձևակերպում կատարելով իր եզրակացության մեջ:

(10 էջ 32-33-րդ պարբ.) Պալատի վերլուծություններն են /առանց համապատասխան իրավական հիմքի վկայակոչման/.

(11 էջ 33.1-րդ պարբ.) Ինչպես արդեն նշել ենք բաժնետոմսերի իրական արժեքը դա սկզբնական արժեքն է, ինչ վերաբերվում է վաճառքի հավանական գնին ապա արժեթղթերի շուկայի բացակայության պարագայում վաճառքի հավանական գին կարող ենք համարել 20% հավելվածը սկզբնական արժեքի նկատմամբ:

(11 էջ 34-րդ պարբ.) Պալատը մատնանշել է 2006 և 2007թվականների Սորսիո ՓԲԸ-ի կողմից ստացված եկամուտը և մատնանշել է, որ եկամուտներն աճեն ել 2.4 անգամ, սակայն Պալատը **չի մատնանշել** ընկերության կողմից կատարած **ծախսերի գումարի չափը** և ընկերության կողմից ստացած **շահույթի չափը**: Այդ դեպքում պատկերը միանգամայն այլ կլիներ, քանի որ հավանական է, որ ծախսերը նույնպես աճել են և նաև հավանական է, որ 2.4 անգամից ավել:

(11 էջ 35-րդ պարբ.) Պալատը մատնանշել է «Էյ Այ Թի» ընկերության շահութաբերության մակարդակը **2007 թվականի** համար: Պալատը չի մատնանշել ընկերության շահութաբերության մակարդակը 2006 թվականի համար, որը **կարող է 20%-ից**

Էլ ցածր լինել: Նման պայմաններում կարևոր է ընդգծել, որ Հիմնադրամը բաժնետոմսի օտարումն իրականացրել է 2007թվականի մայիս ամսին, երբ 2007 թվականի շահութաբերության մակարդակը հայտնի չէր:

(11 էջ 36-րդ պարբ.) Իրական արժեքի գնահատման մեթոդների, հայեցակարգային մոտեցումների և օրենսդրության պահանջների անտեսում տեղի չի ունեցել, քանի որ Հիմնադրամն առաջնորդվել է 39 ստանդարտի՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներին վերաբերվող պահանջներով:

Բաժնետոմսերի օտարման գործընթացի վերաբերյալ Պալատի դիտարկումների մասով կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ Հիմնադրամը ոչ առևտրային իրավաբանական անձ է (Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1ին մաս) և Հիմնադրամի կողմից համապատասխան ներդրումներ կատարելը հետապնդել է ոչ թե եկամուտ ստանալու նպատակ այլ, Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված նպատակների (օրինակ SS ոլորտի զարգացմանը նպաստելու) իրականացման խնդիր: Այլ խոսքերով բաժնետոմսերի օտարման շահույթաբեր լինելը Հիմնադրամի առաջնային խնդիր չէր կարող լինել:

4.Հիմնադրամի կողմից տրամադրած փոխառությունների վերաբերյալ

(12 էջ 37-39 րդ պարբ.) /Փոխառությունների տրամադրումը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասին հակասելու մասով./- Փոխառության տրամադրումը (որը ենթադրում է նույն գումարի վերադարձ փոխատուին) «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնի իմաստով չի հանդիսանում գույքի օգտագործում «ի շահ...» տնօրենի, հետևաբար «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանափակումը կիրառելի չէ քննարկվող իրավիճակում:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ նշված փոխառությունները տրամադրվել են Հիմնադրամի սեփական՝ եկամտային միջոցներից, որոնց մասով ի դեպ Հիմնադրամը վճարել է շահութահարկը, այլ ոչ թե պետական միջոցներից:

(12 էջ 40-րդ պարբ.) /Փոխառության պայմանագիրը տնօրենի կողմից լիազորված անձանց միջոցով տնօրենի հետ կնքելու մասով./- Քննարկվող իրավիճակում լիազորված անձինք հանդիսացել են ոչ թե տնօրենի կողմից (ով գուտ հանդիսանում է Հիմնադրամի ի պաշտոնե միակ ներկայացուցիչը) լիազորված անձինք այլ Հիմնադրամի կողմից (այսինքն իրավունքի միանգամայն այլ սուբյեկտի կողմից) լիազորված անձինք: Ի վերջո լիազորված անձանց միջոցով կնքված գործարքների արդյունքում իրավունքներ և պարտականություններ են առաջացել ոչ թե տնօրենի, այլ Հիմնադրամի համար՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նույն 318-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար, իսկ տվյալ դեպքում ներկայացվողը Հիմնադրամն է, ոչ թե հիմնադրամի տնօրենը:

Այլ խոսքերով քննարկվող իրավիճակում լիազորված անձանց կողմից քաղաքացի Բ. Ենգիբարյանի հետ փոխառության պայմանագրի կնքման ընթացքում լիազորված անձինք գործել են Հիմնադրամի անունից և նրանց գործողությունների արդյունքում իրավունքներ և պարտականություններ են առաջացել Հիմնադրամի համար, իսկ քաղաքացի Բ. Ենգիբարյանի համար այդ գործարքից իրավունքներ և պարտականություններ են առաջացել հենց քաղաքացի Բ. Ենգիբարյանի գործողությունների արդյունքում: Ուստի, վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքների վերլուծության և համադրման հիման վրա, գտնում ենք, որ Հաշվետվության մեջ վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը, առ այն, որ ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր նկատմամբ և չի կարող գործարք կնքել նաև մեկ այլ անձի նկատմամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ, բացառությամբ առևտրային ներկայացուցչության դեպքի, այս պարագայում կիրառելի չէ:

5. Հիմնադրամին Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գլխավոր օպերատոր ճանաչելու և գործունեություն իրականացնելու նպատակով տրամադրված գույքի և պետական աջակցության, ինչպես նաև դրանց օգտագործման վերաբերյալ

(13 էջ 43-րդ պարբ.) Այս մասով ընդգծենք, որ ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ի N13-Ն որոշմամբ ԳՏԿ տարածքը տրված է Հիմնադրամին **պահպանության**, միաբժամանակ ՀՀ կառավարության մեկ այլ 12 փետրվարի 2015թ.վականի 101-Ա որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետով սահմանվել է, որ նույն տարածքը **գրադեցնում են** մի շարք **կազմակերպություններ** («Դ-Լինկ», «Ի-Վորքս», «Դիջիթլ ֆոնդերներ», «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն», «Գյումրու լեզուների տուն», «ՋիԷնՍԻ-Ալֆա», «Թայմ Փրոդաքշըն» և «ՍքայԼայն» ընկերությունները իսկ հետագայում նաև «Թումո» ուսումնակրթական կենտրոնը), նման պայմաններում Հիմնադրամի կողմից կոմունալ վճարումների կատարումը, որը նաև ներառել է տվյալ կազմակերպությունների կողմից սպառած, օրինակ էլեկտրաէներգիայի համար, վճարումը հանդիսանում է Հիմնադրամի կողմից **պահպանության գործառույթի իրականացում:**

Բացի այդ նշենք, որ «պահպանության» եզրույթի բովանդակության օրենսդրական սահմանման բացակայության պայմաններում /մասնավորապես Քաղ. օրենսգրքում/ անհիմն է այն փաստարկը, որ պահպանության գործառույթը որոշակի պայմաններում չի կարող ներառել պահպանության հանձնված գույքի նպատակային օգտագործման ուղղությամբ պահպանություն իրականացնող սուբյեկտի կողմից քայլեր ձեռնարկելը:

Ուշագրավ է, որ ՀՀ կառավարության իր որոշումներով, ինչպես նաև Հիմնադրամի հետ կնքված պայմանագրերով **Հիմնադրամին պատվիրակել է իրականացնել** գործառույթներ (ինչպես օրինակ **դասընթացներ, վերապատրաստումներ** և այլն) որոնց իրականացումն անհնարին էր առանց ԳՏԿ տարածքում համապատասխան գործողությունների կատարման, ինչն էլ Պալատի կողմից դիտարկվել է որպես տարածքի օգտագործում:

Ինչ վերաբերվում է շենքի օգտագործման ուղղությամբ համապատասխան փաստաթղթավորման գործընթացի ձգձգմանը, որը ավարտվեց միայն 2015թ.-ի վերջին,

ապա Պալատի աշխատակիցներին ներկայացվել են, որ Հիմնադրամի կողմից իրականացվել են անհրաժեշտ բոլոր քայլերը, այս գործընթացը հնարավորինս արագ ամփոփելու ուղղությամբ, սակայն համապատասխան թույլտվությունների, հաստատումների, որոշումների հաստատումը, այդ թվում ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունումը և դրանց երկար տևողությունը դուրս են Հիմնադրամի հնարավորությունների ու լիազորությունների շրջանակից: Նկատենք նաև, որ այս գործընթացը (վարձակալության տրամադրման հնարավորությամբ պետական գույքի անհատույց տրամադրումը) **իրավական առումով չունի նախադեպ**, ինչը ենթադրում էր ծրագրի տրամաբանությանը համապատասխանող և պետության համար առավել ընդունելի ձևաչափի նախագծման, **նախկինում առկա ընդհանուր մոտեցման վերանայման** և համապատասխան իրավական ակտերի (ՀՀ կառավարության թիվ 304-Ն որոշման) փոփոխության դժվարին գործընթաց:

(13 էջ 44-րդ պարբ.) /Գույքն առանց հաշվապահական հաշվառման փաստացի ԳՏԿ տարածքում գտնվելու և առանց իրավական հիմքի օգտագործվելու մասով/ Արդյունաբերության զարգացման հիմնադրամի (ներկայիս՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի) կողմից Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի (այսուհետ՝ ԳՏԿ) ծրագրի իրականացման նպատակով «Իմաստասեր Անանիա Շիրակացի» Համալսարան ՍՊԸ-ում վարձակալված տարածքի հանձնումից հետո, կենտրոնի ամբողջ գույքը, փաստացի, **կարող էր հայտնվել փողոցում** /նկատենք որ այս ամենը իրականացվել է, որպես գույքի հանձման ընդունման փաստաթղթավորման գործընթացին զուգընթաց գործողություններ/:

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ի N13-Ն որոշման գույքը, որը ներկայումս գտնվում է ք.Գյումրի, Գայի 1 հասցեում (ԳՏԿ տարածքում), պետք է հանձնվեր Հիմնադրամին (նվիրատվության միջոցով), ինչին պետք է նախորդեր Արդյունաբերության զարգացման հիմնադրամից (ներկայիս՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի) տվյալ գույքի փոխանցումը նվիրաբերության պայմանագրի հիման վրա ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը չի կատարվել, նման պայմաններում Հիմնադրամը իր հաշվին կազմակերպել է նշված գույքի տեղափոխումը ԳՏԿ նորակառույց տարածք, ապահովել դրա պահպանությունն ու օգտագործել այն բացառապես ԳՏԿ ծրագրի նպատակներին համապատասխան, ինչի նպատակով էլ նշված գույքը ժամանակին ձեռք էր բերվել ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Այսպիսով ապահովվել է **պետական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման սկզբունքը**, ինչում համոզվել են Պալատի կողմից տեղում ստուգումներ իրականացնող անձիք:

Այսինքն, եթե Հիմնադրամը հետևեր Պալատի առաջարկին, ապա այս գույքը վաղուց արդեն ոչնչացած կամ անհայտացած կլիներ, ինչը Հիմնադրամի կողմից անընդունելի էր քանի որ տվյալ գույքը հանդիսանում էր պետական գույք: Իրականում այսօր նշված գույքը արդյունավետորեն օգտագործվում է, մասնավորապես գույքի ցանկում առկա թանկարժեք ինժեներական սարքավորումներով հագեցած ուսումնական լաբորատորիաներում առ այսօր սովորում, վերապատրաստվում, հետազոտություններ ու գործնական աշխատանքներ են իրականացնում գյումրեցի հարյուրավոր երիտասարդներ, ինչը հենց ԳՏԿ ծրագրի հիմնական նպատակներից մեկն է:

(14 էջ 45-րդ պարբ.)

1. Համապատասխան **համաձայնություններ** և **/կամ թույլտվություններ** **ձեռք բերված եղել են** (գուգահեռ փաստաթղթավորման գործընթացը ավարտին չի հասցվել), հակառակ դեպքում գույքի սեփականատերը կարող էր գործողություններ ձեռնարկել ուրիշի ապօրինի տիրապետումից այդ գույքը վերադարձնելու ուղղությամբ, ինչը չի կատարվել:

2. Շենքում ընկերությունների խորհրդատվություններ ու աջակցություններ, դասընթացներ և այլն իրականացնելու մասով նշենք, որ Հիմնադրամը դրանով որպես **ծրագրի օպերատոր** իրականացրել է իր **գործառույթը** ծրագրի համար **նախատեսված տարածքում**:

3. **Ընկերությունների տեղակայումը** ծրագրի իրականացման համար **նախատեսված տարածքում** /նկատենք որ այս ամենը իրականացվել է, որպես համապատասխան փաստաթղթավորման գործընթացին գուգընթաց գործողություններ/ հանդիսացել է ծրագրի իրականացման հիմնական ցուցանիշներից մեկը, բացի այդ, ինչպես արդեն նշվել է այն **սահմանված է ՀՀ կառավարության 12 փետրվարի 2015թվականի 101-Ս որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետով**:

4. Գույքը գտնվում է ԳՏԿ տարածքում այն պայմաններում, երբ ընթացքի մեջ է գույքի հանձման ընդունման փաստաթղթավորումը (ինչին նոր պետք է հաջորդի հաշվապահական հաշվառումը) գործընթացին գուգընթաց գործընթաց:

(14 էջ 46-րդ պարբ.) Նշված նորմերի խախտում տեղի չի ունեցել քանի որ Հիմնադրամը Հաշվետվությունում հիշատակված բոլոր գործողություններն իրականացրել է պահպանության գործառույթի շրջանակներում: Բացի այդ **մինչև** Հիմնադրամի օգտագործման **իրավունքի գրանցումը** ԳՏԿ տարածքը **որևիցե այլ սուբյեկտի գույքային իրավունքով չի ծանրաբեռնվել**:

(14 էջ 47-րդ պարբ.) Գույքի գույքագրում չի իրականացվել, քանի որ հանձման ընդունման փաստաթղթավորումը գտնվում է ընթացքի մեջ: Իսկ այլ **անձին պատկանող** գույքը Հիմնադրամը **չէր կարող գույքագրել**:

(15 էջ 48-49-րդ պարբ.) ԳՏԿ և ՎՏԿ միջոցառումների նկարագրություն:

(15 էջ 50-րդ պարբ.) Այլ աղբյուրներից ֆինանսական միջոցների ներգրավումն անհրաժեշտ էր, քանի որ պետական բյուջեից տրամադրված միջոցները **չէին բավականացնում** ծրագրի ամբողջական իրականացման համար:

(16 էջ 2-րդ և 4-րդ կետեր) Ընդգծենք, որ պարբերությունում տրված աշխատավարձային գումարները հանդիսանում են ոչ թե ամսական աշխատավարձի գումարներ, **այլ տարվա կտրվածքով վճարվող գումարներ**: Բացի այդ՝ ներկայացված ձևակերպումից բխում է, որ տեղ է գտնել կրկնակի վճարում (Էկ. նախարարության հետ կնքված պայմանագրի և միարժամանակ Վարկային ծրագրի միջոցներից) մինչդեռ իրականում նշված երկու աղբյուրներից տեղի է ունեցել **աշխատավարձի համաֆինանսավորում, այլ ոչ թե կրկնակի վճարում**:

Այլ խոսքերով նշված համաֆինանսավորման հաշվին **աշխատավարձերի աճ տեղի չի ունեցել** (վերջին 5-6 տարիների ընթացքում):

(16 էջ 3-րդ և 5-րդ կետեր) Համապատասխան կառավարության որոշումներով հստակ ամրագրված է Հայաստանի Հանրապետության **օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին ծրագրի իրականացման հնարավորություն:**

(17 էջ 51-րդ պարբ.) Հաշվետվությունում տեղ գտած «Որպես ամբողջությամբ պետական միջոցների հաշվին իրականացված միջոցառումներ» ձևակերպման մասով նշենք, որ համապատասխան կառավարության որոշումներով հստակ ամրագրված է Հայաստանի Հանրապետության **օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին ծրագրի իրականացման հնարավորություն:**

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պայմանագրում առկա են միայն ադմինիստրատիվ աշխատողների վարձատրությունը, իսկ խորհրդատուների վարձատրությունը կատարվել է համաշխարհային բանկի միջոցներից:

(17 էջ 52-րդ պարբ.) Ֆինանսական միջոցները օգտագործվել են **բացառապես պայմանագրով սահմանված** նպատակներով և չափաքանակներով:

(17 էջ 53-րդ պարբ.) /2014-2016 թվականներին ԳՏԿ և ՎՏԿ մասով Դրամաշնորհային պայմանագրերով (այսուհետ՝ Պայմանագիր) ներկայացված հաշվետվություններն անընդունելի լինելու մասով/ – Այս մասով ճիշտ չէ Պալատի կողմից ներկայացված դիտարկումների տրամաբանությունը: Հայտնում ենք, որ իրականացված աշխատանքները հստակորեն համապատասխանել են կնքված պայմանագրերին, նման պայմաններում, Հվետվության մեջ բացակայում է հստակ նշումը **թե պայմանագրային կոնկրետ որ պարտավորությունը չի կատարվել**, որը հիմք կարող էր հանդիսանալ ներկայացված հաշվետվություններն անբավարար համարելու և չընդունելու համար:

Ավելին, փորձենք ներկայացնել իրավիճակը. Դիցուք՝ ԳՏԿ և ՎՏԿ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է տարեկան 100 պայմանական միավոր գումար: ՀՀ պետական բյուջեից՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության միջոցով տրամադրվում է այդ գումարի միայն 20-30 %, որը հիմնականում ուղղվում է շենքի ադմինիստրատիվ և պահպանման ծախսերին, որպեսզի այլ աղբյուրներից գումարի բացակայության պայմաններում գոնե շենքը չփակվի կամ չքանդվի:

Ծրագրի իրականացումը Հիմնադրամին փոխանցելուց հետո այդ գումարը նվազեց մինչև 69 մլն ՀՀ դրամի և ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մնացած 70-80% միջոցների հատկացումը նախատեսվեց իրականացնել Համաշխարհային բանկի, այլ դոնորների և Հիմնադրամի սեփական միջոցների հաշվին:

Ինչպես արդեն հաստատվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության եզրակացություններով, նաև տեղում՝ այցերի ընթացքում, անձնապես դիտարկվել ու փաստվել է Պալատի ներկայացուցիչների կողմից, ծրագրով նախանշված աշխատանքներն իրականացվել ու իրականացվում են ամբողջ ծավալով:

Ուստի ծրագրի կատարումն ու դրա՝ Դրամաշնորհային պայմանագրով սահմանված արդյունքների ապահովումը, որն իրականում գերազանցվել է մի քանի անգամ, պետք է դիտարկել համապարփակ, այլ ոչ մեկ աղբյուրից ստացված միջոցների շրջանակում: Նշենք նաև, որ Հաշվետվության մեջ **որևէ նշում առկա չէ դրամաշնորհով իրականացված աշխատանքները թերի լինելու մասով:**

Բացի այդ հավելենք, որ համապատասխան կառավարության որոշումներով հստակ ամրագրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին ծրագրի իրականացման հնարավորություն: Ավելին 2016-ի մասով նշենք, որ կառավարության համապատասխան որոշմամբ նախատեսված 222000000 ՀՀ դրամից, այս պահի դրությամբ պայմանագրով նախատեսվել է 152957700 ՀՀ դրամի չափով ծրագրի իրականացման պետական աջակցություն իսկ մնացած գումարի մասով դեռևս հստակություն չկա, ուստի այլ աղբյուրների գումարների ներգրավումը անհրաժեշտ է ծրագրի հետագա բնականոն ընթացքի ապահովման համար:

(18 էջ 55-ին պարբ.)

1-ին կետ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում **ներկայումս քննվում է** թիվ ՇԴ/3203/02/16 քաղաքացիական գործն ըստ հայցի Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի ընդդեմ Իգիթ Էդգար ՍՊԸ-ի Գումար բռնագանձելու պահանջի մասին նկատմամբ հարուցված է քաղաքացիական գործ,

(տես՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=29554872554675747)

Հաշվետվությունում մատնանշված վարձավճարի վճարման մասով Թայմ ՍՊԸ-ի պարտքը **ամբողջությամբ մարվել է 22.07.2016 թվականի դրությամբ**:

2-րդ կետ տարածքները նշված ժամանակահատվածում ենթավարձակալության չեն տրամադրվել, քանի որ տարածքի նկատմամբ Հիմնադրամի **գույքային իրավունքների ձևակերպման գործընթացը չէր ավարտվել** օբյեկտիվ պատճառներով:

3-րդ կետ ԳՏԿ տարածքի կոմունալ վճարումներն իրականացվել են Հիմնադրամի կողմից ստանձնած տարածքի պահպանության գործառույթի շրջանակում:

Բացի այդ 2014 թվականի երկրորդ եռամսյակին ընդհուպ մինչև նույն տարվա ավարտը ԳՏԿ տարածքը զբաղեցրել են **ոչ թե 21 այլ 8** ընկերություններ, որոնց թիվն աստիճանաբար ավելանալով հետագայում հասել է 21-ի:

(18 էջ 56-րդ պարբ.) անհասկանալի է թե հիմնադրամի կողմից կոնկրետ ինչ գործողություններով են խախտվել ենթավարձակալության պայմանագրով Հիմնադրամի ստանձնած պարտավորությունները:

(18 էջ 57-րդ պարբ.) ՀՀ կառավարության 9 հունվարի 2014 թվականի N 13-Ն որոշմամբ առաջարկվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին մինչև որոշման 6-րդ կետում նշված պայմանագիրը (Գյումրի քաղաքի Գայի 1 հասցեում գտնվող անշարժ գույքի շինարարության ավարտից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումից հետո՝ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն այդ անշարժ գույքը «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին 20 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու վերաբերյալ և կնքել համապատասխան պայմանագիր) կնքելն ստանձնել Գյումրի քաղաքի Գայի 1 հասցեում գտնվող անշարժ գույքի պահպանությունը: Մինչդեռ Հաշվետվության մեջ Պալատը հղում է տալիս **պահատվության հարաբերությունները** կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներին: Նշենք, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 813-րդ հոդվածի 2-րդ մասով **պահատվության պայմանագրով**, որտեղ պահառուն, որպես իր մասնագիտական գործունեության նպատակներից մեկը՝ պահատվություն

իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություն է (արհեստավարժ պահառու), կարող է նախատեսվել պահատուի գույքը պայմանագրով նախատեսված ժամկետում ի պահ վերցնելու պահառուի պարտականությունը: **Հիմնադրամը մասնագիտացված պահառու չէ:** Հետևաբար պահատվության հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի չեն կարող կարգավորել կառավարության վերոնշյալ որոշմամբ նշված պահպանության գործառույթը:

6. Նախարարության կողմից Հիմնադրամում իրականացված ուսումնասիրության վերաբերյալ

(19 էջ 59-րդ պարբ.)

1-ին կետ Խորհրդի որոշումով տարեկան բյուջեի տողերի միջև փոփոխությունները կատարվում է **տնօրենի հրամանով**, ընդ որում տարեկան բյուջեի ընդհանուր թվի փոփոխություն չի կատարվել:

3-րդ կետ – Նորմատիվ ակտով սահմանված գործուղման նորմաների գերազանցման մասով հայտնում ենք, որ ոչ պետական իրավաբանական **անձերն իրավունք** ունեն գործուղման ծախսերից գիշերավարձը **հատուցել փաստացի կատարած** ծախսերի չափով:

4-րդ կետ – **HSBC Բանկը** որտեղ գտնվում են Հիմնադրամի բոլոր հաշիվները կազմակերպությանը կորպորատիվ **քարտ տրամադրում** է կազմակերպության **տնօրենի** անունով:

5-րդ կետ – Փոխառության մասով Հիմնադրամի փաստարկները (առավել մանրամասն տես 11 էջ 37-րդ պարբ.-12 էջ 38-39 թղ պարբ.):

(20 էջ 60-րդ պարբ.) Հիմնադրամի կողմից նշված ուսումնասիրության մասով **ներկայացվել է դիրքորոշում**, որում Հիմնադրամը հայտնել է անհամաձայնությունը ուսումնասիրությամբ արձանագրված դիտարկումների մասով:

7. Միջանկյալ արձանագրություններով նշված փաստերի առնչությամբ Հիմնադրամի կողմից ներկայացված առարկությունների վերաբերյալ

(20 էջ 62-րդ պարբ.) Հիմնադրամի ներկայացրած փաստարկները հանդիսանում են **առարկություններ** և ոչ թե պատճառաբանություններ, նշված առարկությունները ձևակերպված են օրենսդրական այս կամ այն նորմի վերլուծության հիման վրա:

Նշենք նաև որ **«առարկության» եզրույթի** բովանդակության օրենսդրական **սահմանում առկա չէ:** Հետևաբար չեն կարող բացառապես վերաբերվելին հաշվետվություններում տեղ գտած փաստական հանգամանքների եղելիության փաստին:

(21 էջ 63-րդ պարբ.) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը սույն հարաբերությունների նկատմամբ **կիրառելի չէ**, քանի որ Հիմնադրամի կողմից ներկայացվել են **առարկություններ** և որոնք **չունեն իրավական ակտի կարգավիճակ**, որոնցում բնականաբար պետք է տեղ գտնեին Հիմնադրամի վերլուծությունները:

(21 էջ 64-րդ պարբ.) Հաշվապահական հաշվառման օրենսդրության մասով (առավել մանրամասն տես 10 էջ 31-րդ պարբ. մասում):

(22 էջ 65-րդ պարբ.) Փոխառության մասով հիմնադրամի փաստարկները (առավել մանրամասն տես 11 էջ 37-րդ պարբ.-12 էջ 38-39 ըդ պարբ.): Նշենք, որ տոկոսների վճարումը տվյալ պարագայում հանդիսացել Հիմնադրամի համար լրացուցիչ եկամուտի ձևավորման աղբյուր:

(22 էջ 66-րդ պարբ.) տվյալ պարբերությամբ հիշատակված եզրույթների օգտագործումը Հիմնադրամի կողմից նպատակ է հետապնդել առավել հստակ ներկայացնել ստեղծված իրավիճակը:

(22 էջ 67-րդ պարբ.) «իրարամերժ են և հակասում են միմյանց» ձևակերպումը Պալատի սուբյեկտի եզրահանգման արդյունք են:

(22 էջ 68-69 ըդ պարբ.) 351-Ն որոշմամբ նշված փաստաթղթերը պետք է պահվեն 3-5 տարի: Բացի այդ նշված որոշումը **առհասարակ չի հիշատակում** «կազմակերպությունների կողմից առաջացած հետաքրքրությունը» **որպես պահպանման ենթակա** փաստաթուղթ: (առավել մանրամասն տես 4 էջ 10-րդ պարբ. մասում).

(23 էջ 70-71-րդ պարբ.) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգ հաստատվել է կոնկրետ գործարքների մասով. (առավել մանրամասն տես 5 էջ 14-րդ պարբ. մասում).

(23 էջ 72-րդ պարբ.) Վաճառքին նախորդող գույքի գնահատման պարտադիր պարտականություն նախատեսված չէ, բացի այդ իրականացված օտարման արժեքը (սկզբնական արժեքի նկատմամբ 20% հավելաճը) հանդիսացել է իրական արժեք:

(23 էջ 73-րդ պարբ.) «այլ լիազորություն» սահմանելու անհրաժեշտություն օրենքով սահմանված չէ: (առավել մանրամասն տես 4 էջ 11-րդ պարբ. հատված):

(23 էջ 74-րդ պարբ.) «անվանական արժեքով» գույքի օտարումը օրենքի հակասելու մասով եզրահանգումը Պալատի կողմից օրենքի միակողմ և յուրովի մեկնաբանման արդյունքում կայացված սուբյեկտիվ եզրահանգման հետևանք է:

(23 էջ 75-րդ պարբ.) Խորհրդի որոշումները կայացվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

(23 էջ 76-րդ պարբ.) Բաժնետոմսերի վաճառքի օտարման «վաղօրոք» և «ոչ շահավետ» որակումը, ոչ այլ ինչ է քան սուբյեկտիվ կարծիք:

(24 էջ 76-րդ պարբ.) Նշենք որ իրականում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ էկոնոմիկայի նախարարի, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի մասնակցությամբ, որի ընթացքում համաձայնություն է ձեռքբերվել, որ ամբողջական նյութերը կտրամադրվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարին և վերջինի կողմից նյութերին ծանոթանալուց հետո միայն վերահսկիչ պալատի հետ կկազմակերպվի քննարկում: Այլ խոսքերով Հաշվետվությունում հիշատակվող քննարկումը տեղի ունենալ չեր կարող, քանի որ այդ ժամանակ ՀՀ էկոնոմիկայի նախարարը նյութերին ծանոթ չէր:

(24 էջ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(24 էջ 77-րդ պարբ.)

1.1. կետի մասով - /Մշտական պահպանության ենթակա փաստաթղթեր չեն պահպանվել/:

351-Ն որոշմամբ նշված փաստաթղթերը պետք է պահվեն 3-5 տարի (առավել մանրամասն տես 4 էջ 10-րդ պարբ. մասում).

1.3. կետի մասով - /Հիմնադրամի բաժնեմասերի իրական (շուկայական) արժեքի գնահատում չի կատարվել/:

Վաճառքին նախորդող գույքի գնահատման պարտադիր պարտականություն նախատեսված չէ, բացի այդ իրականացված օտարման արժեքը (սկզբնական արժեքի նկատմամբ 20% հավելվածը) հանդիսացել է շուկայական արժեք:

1.4. կետի մասով - /Հիմնադրամի բաժնեմասերն օտարվել են առանց Խորհրդի համապատասխան որոշումների/:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1) կետի ուժով հանդիսանում է տնօրենի իրավասությունը, հոգաբարձուների խորհուրդը զուտ սահմանում է գույքի տնօրինման կարգը: (առավել մանրամասն տես 4 էջ 11-րդ պարբ. մասում).

(24 էջ 78-րդ պարբ.) 2-րդ կետի մասով – Այլ կազմակերպությունների ամբողջ ֆինանսական վերլուծությունը և հաջողության պատմությունը շարադրումը Հիմնադրամին վերաբերող հաշվետվության եզրակացության մեջ տեղին չէ:

(25 էջ 80-րդ պարբ.) Բաժնեմասերի «վաղօրոք» և առանց իրական շուկայական գնի որոշման օտարումը «ոչ շահավետ» որակելը սուբյեկտիվ գնահատման արդյունք է:

Առավել ևս եթե օտարումն իրականացրել է **սկզբնական արժեքի նկատմամբ 20% հավելվածով**, ինչն դիտարկվել է, որպես շուկայական գին:

(25 էջ 81-րդ պարբ.) 4-րդ կետի մասով կատարվել են ստանդարտ 39-ի պահանջները (առավել մանրամասն տես 10 էջ 30-31-ին պարբ.):

(25 էջ 82-րդ պարբ.) Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասին հակասելու մասով./- Փոխառության տրամադրումը (որը ենթադրում է նույն գումարի վերադարձ փոխատուին) «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնի իմաստով չի հանդիսանում գույքի օգտագործում «ի շահ...» տնօրենի, հետևաբար «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանափակումը կիրառելի չէ քննարկվող իրավիճակում:

Քննարկվող իրավիճակում լիազորված անձինք հանդիսացել են ոչ թե տնօրենի կողմից (ով զուտ հանդիսանում է Հիմնադրամի ի պաշտոնե միակ ներկայացուցիչը) լիազորված անձինք այլ Հիմնադրամի կողմից (այսինքն իրավունքի միանգամայն այլ սուբյեկտի կողմից) լիազորված անձինք: Ի վերջո լիազորված անձանց միջոցով կնքված գործարքների արդյունքում իրավունքներ և պարտականություններ են առաջացել ոչ թե տնօրենի, այլ **Հիմնադրամի համար**: (առավել մանրամասն տես 11 էջ 37-րդ պարբ.-12 էջ 38-39 րդ պարբ. և 12 էջ 40-րդ պարբ.):

(25 էջ 83-րդ պարբ.) 6-րդ կետի մասով Նշենք, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, ինչպես նաև կնքված պայմանագրերով կառավարությունն **Հիմնադրամին պատվիրակել է իրականացնել գործառնություններ** (դասընթացներ, վերապատրաստումներ և այլն) որոնց իրականացումն անհնարին էր առանց ԳՏԿ տարածքում համապատասխան գործողությունների կատարման, ինչն էլ Պալատի կողմից դիտարկվել է որպես տարածքի օգտագործում: (առավել մանրամասն տես 13 էջ 43-րդ պարբ. մասով):

(26 էջ 84-րդ պարբ.) 7-րդ կետի մասով Նշենք, որ գույքը գտնվում է ԳՏԿ տարածքում, օգտագործվում է ծրագիր նպատակներին համապատասխան այն պայմաններում, երբ ընթացքի մեջ է գույքի հանձման ընդունման փաստաթղթավորումը (ինչին նոր պետք է հաջորդի հաշվապահական հաշվառումը) գործընթացին զուգընթաց գործընթաց: Միաժամանակ նշենք, որ Հիմնադրամի կողմից գույքի ընդունումը հնարավոր կլինի իրականացնել սնանկ կազմակերպությունների («Սոլարթ» ՓԲԸ և «ՏեխնոՊոլ» ՓԲԸ) բաժնետոմսեր դուրս բերվեն նվիրաբերվող գույքի կազմից:

(26 էջ 85-րդ պարբ.) 8-րդ կետի մասով ՀՀ կառավարության որոշում այլ աղբյուրներ (առավել մանրամասն տես 17 էջ 53-րդ պարբ.):

(26 էջ 86-րդ պարբ.) 9-րդ կետի մասով 406,800 ՀՀ դրամ դատարան, 277300 ՀՀ դրամը մարած է: (առավել մանրամասն տես 18 էջ 55-ին պարբ. մասով):

(26 էջ 87-րդ պարբ.) 10-րդ կետի մասով - Կարևոր ենք համարում ընդգծել, որ «Դ-Լինկ», «Ի-Վորքս», «Դիջիթալ Փոմբգրաներ», «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն», «Գյումրու լեզուների տուն», «ՋիԷնՍի-Ալֆա», «Թայմ Փրոդաքշըն» և «ՍրայԼայն» ընկերությունները ինչպես նաև «Թումո» ուսումնական կենտրոնը ԳՏԿ ում են գտնվել ՀՀ կառավարության (այսինքն գույքի սեփականատիրոջ) 2015 թվականի փետրվարի 12-ի N 101-Ս որոշման Հավելված N 1-ի 5-րդ կետը հաշվի առնելով: Նման պայմաններում անհասկանալի է թե ինչ իրավունքով Հիմնադրամը (ով նշված տարածքի նկատմամբ չունեք գրանցված օգտագործման իրավունք) պետք է հաշվարկեր և գանձեր վարձավճարներ:

(26 էջ 88-րդ պարբ.) 11-րդ կետի մասով - Հիմնադրամի կողմից Գյումրի քաղաքի Գայի 1 հասցեում գտնվող շենքի կոմունալ վճարումների և անվտանգության ապահովման մասով ծախսերը կատարվել են տարածքի պահպանման գործառույթի շրջանակներում՝ համաձայն 2014 և 2015 թվականների ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրերի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հաշվետվությունում հիշատակված ընկերությունները ԳՏԿ տարածքում են գտնվել ՀՀ կառավարության (այսինքն գույքի սեփականատիրոջ) 2015 թվականի փետրվարի 12-ի N 101-Ս որոշման Հավելված N 1-ի 5-րդ կետի հիման վրա, ուստի միանգամայն բնականոն է, որ իրականացված կոմունալ ծախսերը նաև ներառել են ԳՏԿ տարածքում նշված ընկերությունների գտնվելու պատճառով ավել հաշվարկվող կոմունալ ծախսերը, ինչ վերաբերում է անվտանգության ծառայությանը, ապա ընկերությունների տվյալ շենքում գտնվելու փաստը ազդեցություն չի ունեցել անվտանգության ծառայությունների համար Հիմնադրամի կողմից իրականացվող վճարումների չափի վրա:

(26 էջ 89-րդ պարբ.) 12-րդ կետի մասով Հիմնադրամի կողմից նշված ուսումնասիրության մասով ներկայացվել է դիրքորոշում, որում Հիմնադրամը հայտնել է անհամաձայնությունը ուսումնասիրությամբ արձանագրված դիտարկումների մասով:

(27 էջ) ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(27 էջ 91-րդ պարբ.) 1.1-րդ կետի մասով – Հիմնադրամի կողմից գույքի ընդունումը հնարավոր կլինի իրականացնել միայն եթե սնանկ կազմակերպությունների բաժնետոմսերը դուրս բերվեն նվիրաբերվող գույքի կազմից:

(27 էջ 91-րդ պարբ.) 1.2-րդ կետի մասով – Ընկերությունները ԳՏԿ տարածքում են գտնվել ՀՀ կառավարության (այսինքն գույքի սեփականատիրոջ) 2015 թվականի փետրվարի 12-ի N 101-Ա որոշման հիման վրա. ((26 էջ 87-րդ պարբ.) 8-րդ կետի մասով):

3-րդ կետի մասով – Կրկնակի վճարված որևէ գումար գոյություն չունի: Անհասկանալի է թե ինչ նկատի ունի «կրկնակի վճարված գումար» ձևակերպմամբ:

(27 էջ 91-րդ պարբ.) 4-րդ կետի մասով – ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, չի կարող «մշակել միջոցառումներ» Հիմնադրամի (իրավական առումով ամբողջովին ինքնուրույն իրավունքի սուբյեկտի) «սեփականության արդյունավետ կառավարման ուղղությամբ»:

(28 էջ 92-րդ պարբ.) 1-ին կետի մասով - անորոշ է թե ինչ նկատի ունի Պալատը «լիարժեք վերահսկում» եզրույթը օգտագործելով այս ձևակերպման մեջ, պարզ չէ թե կոնկրետ որ դեպքերում է վերահսկումը եղել «ոչ լիարժեք»:

(28 էջ 92-րդ պարբ.) 2.1-րդ կետի մասով - Նախ ձևակերպումն անորոշ է, անհասկանալի է, թե կոնկրետ ինչ նկատի ունի Պալատը այս պարբերությամբ, բացի այդ, ամեն դեպքում, Հիմնադրամը չի կարող կաշկանդված լինել (պարտավորված լինել հետևել) նշված հայեցակարգի դրույթներով:

(28 էջ 92-րդ պարբ.) 2.2-րդ կետի մասով - Նախ «Պետության ընձեռած հնարավորություն» եզրույթն անորոշ է, դժվար է հասկանալ ինչ նկատի ունի Պալատը այս եզրույթն օգտագործելիս: Բացի այդ Հիմնադրամի եկամուտները մշտապես և բացառապես ուղղվել են Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացմանը:

(28 էջ 92-րդ պարբ.) 2.3-րդ կետի մասով - 406,800 ՀՀ դրամ դատարան, 277300 ՀՀ դրամը մարած է: (առավել մանրամասն տես 18 էջ 55-ին պարբ. մասով):

(28 էջ 92-րդ պարբ.) 3-րդ կետի մասով – արձանագրված խախտումների առկայության փաստը Պալատի սուբյեկտիվ եզրահանգման արդյունք է:

(28 էջ 92-րդ պարբ.) 4-րդ կետի մասով - «չիրականացված գործառույթ» եզրույթն անհասկանալի է, եզրահանգման որոշակիության բացակայությունն ակնհայտ է, պարզ չէ թե կոնկրետ որ գործառույթի և, համապատասխանաբար, որ պաշտոնատար անձանց մասին է խոսվում այս պարբերությունում:

(28 էջ 93-րդ պարբ.) – Հիմնադրամի ընթացիկ կառավարման գործառույթն իրականացնելիս տնօրենը մշտապես առաջնորդվել է ՀՀ օրենսդրության պահանջներին և կարգավորումներին համապատասխան: Սույն պարբերությամբ արձանագրված դիտարկմանը համաձայն չենք:

Միաժամանակ ստորև ներկայացվում է Հաշվետվության վերաբերյալ ՓԻ-Էյջ-ՓԻ Փարթնըրզ Փակ բաժնետիրական ընկերության մասնագետական կարծիքը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից կազմված ընթացիկ հաշվետվության նախագծի և դրա առնչությամբ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի առարկությունների վերաբերյալ

ՀՀ վերահսկիչ պալատի իրավասության վերաբերյալ

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, ֆինանսական վերահսկողությունը բնորոշվում է որպես վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողության տեսակ, որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և *պետական ու համայնքային սեփականության օգտագործման* ընթացքում ֆինանսատնտեսական փաստաթղթերի վարման և արդյունքում ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը:

Ելնելով այն հանգամանքից, որ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (այսուհետ՝ ՁԻՀ) կանոնադրությամբ հստակ սահմանված է, որ. ա) ՁԻՀ-ն ունի առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ, բ) Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շարժական և անշարժ գույք, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք, գ) ՁԻՀ-ը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ իր գործունեության առարկային և նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան, կարելի է եզրակացնել, որ «*սեփական գործունեության արդյունքում գոյացած եկամուտների հաշվին կատարած ծախսերը և Հիմնադրամի այլ ոչ պետական ֆինանսավորմամբ ծրագրերի միջոցների հաշվին կատարած ծախսերը*» վերահսկելու/ստուգելու իրավասություն ՀՀ վերահսկիչ պալատը, կարծես թե չունի, քանի որ բյուջետային միջոց չհամարվող և ՁԻՀ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված միջոցները չեն հանդիսանում «*պետական ու համայնքային սեփականության*»:

Բացի այդ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ հիմնադրամի գույքը չի կարող համարվել հիմնադրի (տվյալ դեպքում՝ ՀՀ կառավարության) գույքը, այսինքն՝ որևէ կերպ չի կարող հանդիսանալ պետական սեփականություն:

«Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշման կիրառման պարտադիրության վերաբերյալ

Նախնառաջ, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին» N 351-Ն որոշման ուսումնասիրման արդյունքում տպավորություն է ստեղծվում, որ այն, ՁԻՀ-ի վրա առհասարակ չի տարածվում:

Մասնավորապես, ՀՀ կառավարության թիվ 351-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ. ա) պետական կամ համայնքային արխիվների համալրման աղբյուր հանդիսացող *պետական և համայնքային հիմնարկներն ու կազմակերպությունները* սույն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված մշտական պահպանության փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետները լրանալուց հետո հանձնում են համապատասխան արխիվ, եթե այդ ցանկով այլ բան նախատեսված չէ, իսկ համալրման աղբյուր չհանդիսացող *պետական և համայնքային հիմնարկներում ու կազմակերպություններում* դրանց պահպանման ժամկետների մասին որոշումն ընդունում է հիմնարկի կամ կազմակերպության փորձագիտական հանձնաժողովը, բ) սույն որոշման գործողությունը չի տարածվում *այլ իրավաբանական անձանց* և անհատ ձեռնարկատերերի գործունեության արդյունքում առաջացած փաստաթղթերի վրա, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ակնհայտ է, որ ՁԻՀ-ն իր կազմակերպատիրական տեսակով չի հանդիսանում պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն:

Այնուամենայնիվ, եթե ՁԻՀ-ը ներքին իրավական ակտով, կամավորության սկզբունքով, սահմանել է փաստաթղթերի պահպանման և արխիվացման ներքին կարգ, ապա պետք է առաջնորդվի այդ կարգով: Նույնիսկ, եթե ՁԻՀ-ը որոշում կայացներ առաջնորդվել ՀՀ կառավարության թիվ 351-Ն որոշմամբ հաստատված ցանկով, «*որոշումների և արձանագրություններին կից փաստաթղթերի, մասնավորապես՝ բաժնեմասերի ձեռքբերման վերաբերյալ կազմակերպությունների առաջարկների*» նկատմամբ պարտադիր արխիվացիայի

իրավական պահանջ չէր առաջանա, քանի որ դրանք չեն հաղիսանում տնտեսական գործառնության փաստը հավաստող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող սկզբնական փաստաթղթեր (տե՛ս ցանկի 152-րդ կետը):

«Հիմնադրամի կողմից ստեղծված ընկերությունների բաժնետոմսերի իրական արժեքի գնահատման և դրանց վաճառքի հավանական գնի որոշման վերաբերյալ»

հաշվետվությունում տեղ գտած վերլուծության մասով

Նախևառաջ, անհրաժեշտ է ընդգծել, որ համաձայն կանոնադրության, ՁԻՀ-ը հիմնադրի (ՀՀ կառավարության) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, *շահույթ ստանալու նպատակ չհետապնդող* կազմակերպություն է: ՁԻՀ-ի կանոնադրական նպատակները, ընդհանուր առմամբ, հետևյալն են.

- ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը միջազգային չափանիշներին հասցնելու համար նախապայմանների ստեղծումը.

- Հայաստանում արդեն իսկ գոյություն ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը նպաստելը, այդ ոլորտում արդեն իսկ գործող ընկերությունների հզորացմանն աջակցելը և նրանց մրցունակությունը միջազգային շուկայում բարձրացնելը.

- երկարաժամկետ մեթոդաբանական օգնության և զարգացման հաջողակ մոդելների տրամադրումը՝ Հայաստանի տնտեսության այլ ոլորտների համար.

- Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության հիմքերը հզորացնելը՝ ապահովելով անցումն ավելի բարդ և բարձրարժեք ոլորտների, ձեռներեցության երկարաժամկետ զարգացմանն ու դրանով իսկ երկրի կենսամակարդակի բարձրացմանը նպաստելը:

Ակնհայտ է, որ ՁԻՀ-ի գործունեության արդյունավետությունը գնահատելիս, անհրաժեշտ է ոչ թե գնահատել, թե արդյո՞ք կանոնադրական նպատակներն իրագործելու համար առանձին գործարքներից (այդ թվում՝ նաև՝ բաժնետոմսերի օտարման գործարքներից) ՁԻՀ-ը փորձել է առավելագույն շահույթ ստանալ, այլ՝ արդյո՞ք ՁԻՀ-ի գործունեությունը կամ տվյալ գործարքի իրականացումը առավելապես ուղղված է եղել.

- գործարարության զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրմանը շահագրգիռ հաճախորդներին՝ հիմնականում համակարգչային ծրագրավորման ոլորտում գործող տեղական ընկերություններին.

- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատող տեղական ընկերությունների և օտարերկրյա ներդրողների ու հնարավոր գործընկերների միջև գործարար կապերի ստեղծմանը.

- տեղական ընկերությունների տնօրեններին և առաջատար մասնագետներին բիզնես-առաջարկների մշակման ու կադրերի կառավարման հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրմանը և այլ:

Այն փաստը, որ «Սորսիո» ՓԲԸ-ն և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ն ՁԻՀ-ի կողմից իր բաժնեմասնակցությունն օտարելուց հետո ֆինանսատնտեսական գործունեության ավելի լավ ցուցանիշներ են ապահովել, վկայում է ՁԻՀ-ի կողմից իր կանոնադրական նպատակներին հասնելու վառ ապացույց:

Անդրադառնալով ՁԻՀ-ի կողմից ստեղծված ընկերությունների բաժնետոմսերի իրական արժեքի գնահատման և դրանց վաճառքի հավանական գնի որոշման վերաբերյալ հաշվետվությունում տեղ գտած վերլուծությանը, անհրաժեշտ է նշել, որ.

1. մինչև 2010 թվականի հունվարի 1-ը գործող ՀՀՄՄ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի (այսուհետ՝ ՀՀՄՄ 39) 9-րդ պարագրաֆով *վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները* բնորոշում է որպես ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք կազմակերպության կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես (ա) փոխառություններ և դեբիտորական պարտքեր, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, կամ (գ) ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

2. ՀՀՄՄ 39 ստանդարտի 46-րդ պարագրաֆի համաձայն սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են հետևյալ կերպ.

«46. սկզբնական ճանաչումից հետո կազմակերպությունը պետք է ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափի իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք այն կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

ա) փոխառությունների և դեբիտորական պարտքեր, ինչպես սահմանված է 9-րդ պարագրաֆում, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.

բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, ինչպես սահմանված է 9-րդ պարագրաֆում, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.

գ) **բաժնային գործիքների մեջ ներդրումներ**, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև ածանցյալ գործիքներ, որոնք կապված են դրանց հետ և պետք է մարվեն այդպիսի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որոնք պետք է չափվեն սկզբնական արժեքով:»:

3. ՀՀՄՄ 39 ստանդարտի 48Ա-րդ պարագրաֆի համաձայն «իրական արժեքի լավագույն վկայությունը գործող շուկայի գնանշված շուկայական գներն են: Եթե ֆինանսական գործիքի շուկան գործող չէ, ապա կազմակերպությունը որոշում է իրական արժեքը՝ օգտագործելով գնահատման տեխնիկա: Գնահատման տեխնիկայի օգտագործելու նպատակն է որոշել, թե չափման ամսաթվի դրությամբ որքան կլինեն գործարքային գինը՝ սովորական գործարար նկատառումների հիման վրա կատարված «անկախ կողմերի միջև գործարքում»: Գնահատման տեխնիկաները ներառում են շուկայում վերջերս կատարված իրազեկ, պատրաստակամ «անկախ կողմերի միջև գործարքների» օգտագործումը, դրանց առկայության դեպքում, մեկ այլ էականորեն չտարբերվող գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, զեղչված դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը և օպցիոնների գնահատման մոդելները:»:

Հաշվի առնելով ՀՀՄՄ 39-ի վերոհիշյալ դրույթները, ակնհայտ է, որ ԶԻՀ-ը ՀՀՄՄ 39-ի պահանջներին համապատասխան «Սորսիո» ՓԲԸ-ի և «Էյ-Այ-Թի» ՓԲԸ-ի՝ ԶԻՀ-ին պատկանող բաժնետոմսերը իր հաշվառման համակարգում պետք է դասակարգեր որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և դրանք չափեր սկզբնական արժեքով, այլ ոչ թե՝ իրական արժեքով, քանի որ.

- հիշյալ ընկերությունների բաժնետոմսերի համար գործող շուկա գոյություն չունի.
- վերջերս կատարված իրազեկ, պատրաստակամ «անկախ կողմերի միջև» էականորեն չտարբերվող գործարքներ առկա չեն եղել.
- զեղչված դրամական միջոցների հոսքերի վերլուծության մոդելի կիրառումը գործնականում հնարավոր չէ, քանի որ նոր ստեղծված ընկերությունների պարագայում
- (հաշվի առնելով նաև տեղեկատվական ռոբոտին բնորոշ առանձնահատկությունները) դրամական միջոցների ապագա հոսքերի արժանահավատ կանխատեսում կատարելը գործնականում գրեթե իրագործելի չէ.
- օպցիոնների գնահատման մոդելների կիրառումը գործնականում հնարավոր չէ, քանի որ գնանշված օպցիոնների գործող շուկա գործնականում առկա չէ:

Հարգանքով՝

Տնօրեն՝

Բ. Ենգիբարյանի